ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

Հաստատում եմ՝ Ա.Երեմյան

ԿՏՊՔ կառավարման խորհրդի նախագահ

15 03 2024 թվական

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԿՏՊՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ, ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Հրազդան 2024

ԿՏՊՔ հավակնությունները հետազոտության ոլորտում

- Հետազոտական, ինքնուրույն աշխատանքները ուսումնառության հիմնական բաղադրիչն են և միտված են ուսումնառության որակի բարելավմանը
- Հետազոտական, ինքնուրույն աշխատանքը որոշակի թեմայով կամ որոշակի երևույթի մասին տեղեկատվության հավաքագրման և ուսումնասիրման գործընթացն է, որն ունի հստակ նպատակ և պետք է նպաստի ուսանողի ինքնուրույն, վերլուծական կարողությունների զարգացմանը
- Հետազոտական, ինքնուրույն աշխատանքների արդյունքը պետք է լինի լրացուցիչ, նոր գիտելիքի և տեղեկատվության ձեռքբերումը տվյալ ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ
- Հետազոտական, ինքնուրույն աշխատանքները միտված են զարգացնելու ուսանողների ինքնուրույն, վերլուծական, տրամաբանական, դատողական, ստեղծագործական, մասնագիտական հմությունները և կարողությունները
- Հետազոտական, ինքնուրույն աշխատանքները պետք է ունենան հստակ ձևակերպված նպատակներ և արդյունքում ուսանողները պետք է կատարեն ինքնուրույն եզրահանգումներ , ուսանողի մոտ պետք է ձևավորվեն հետազոտութուն անելու հմտություններ և կարողություններ՝ մասնագիտական որակավորմանը համապատասխան
- Հետազոտական աշխատանքները նպատակ ունեն նաև ուսանողների մոտ ձևավորելու հետազոտական, ինքնուրույն, վերլուծական աշխատանքի պլանավորման, իրականացման և աշխատանքի ձևակերպման, ներկայացման հմտություններ
- Հետազոտական են համարվում ուսանողների ինքնուրույն, անհատական աշխատանքը կամ զեկույցը, ավարտական կամ դիպլոմային, նախագծային աշխատանքները, ռեֆերատները, որոնք իրականացվում են որևէ թեմայի կամ երևույթի շուրջ

Հետազոտական աշխատանքների կատարման ընդհանուր պահանջներ

Թեմայի ընտրություն

- ընտրված թեման պետք է բխի տվյալ դասընթացի վերջնարդյունքից և ուղղված լինի մասնագիտական գիտելիքի խորացմանը , ինչպես նաև ուսումնասիրվող դասընթացի վերաբերյալ լրացուցիչ գիտելիքների ձեռբերմանը , մասնագիտական հմտությունների զարգացմանը,
- թեմայի վերնագիրը անպայման պետք է մատնանշի հետազոտության կոնկրետ շրջանակը,
- թեման ընտրվում է հետազոտողի կամ տվյալ դասընթացը վարող դասախոսի առաջարկով,

- հետազոտական, ինքնուրույն աշխատանքները կարող են լինել տեսական (ընտրված թեմայի վերաբերյալ համապատասխան ուսումնասիրություններ, փաստերի հավաքագրում, համակարգում, ընդհանրացում, և գործնական (օրինակ՝ լաբորատոր փորձեր))
- նպատակների ձևակերպում,
- նպատակների ձևակերպումը պետք է համապատասխանի վերնագրին,
- նպատակները պետք է հիմնավորեն, թե ինչո՞ւ է պետք այդ աշխատանքը կատարել, լինեն հետազոտողի հնարավորություններին ու պաշարներին (ռեսուրսներին) համապատասխան, մատնանշեն հետազոտության իրականացման քայլերի ուղղվածությունը, ակնկալվող վերջնարդյունքները,
- մեկից ավելի նպատակների դեպքում դրանք պետք է լինեն կառուցողական, օրգանապես կապված, բխեն մեկը մյուսից, շարունակեն, լրացնեն միմյանց և ամբողջացնեն նպատակը: Նպատակները ձևակերպելիս ցանկալի է ցույց տալ հետևյալ (կամ՝ նմանատիպ) գործողությունները՝ խթանել, սովորեցնել, բարելավել, աջակցել, լրացնել, ավելացնել, զարգացնել, որակը բարձրացնել, ուժեղացնել, միավորել, համախմբել, համակարգել, կապակցել, կատարելագործել, վավերացնել, հավատարմագրել, սահմանել, նախանշել հետագա անելիքները, կանխատեսել զարգացման ուղղություններ և այլն,
- խնդիրների ձևակերպում,
- խնդիրներն ունեն նույն ուղղվածությունը, տանում են դեպի նույն նպատակակետը: Խնդիրներն այն կոնկրետ, չափելի, հասանելի, իրատեսական, ընդհանուր նպատակին համապատասխանող և որոշակի իրականացման ժամկետ ենթադրող քայլերն են, որոնք պետք է հիմնավոր պատասխանեն այն հարցերին, թե ի՞նչ հաջորդական քայլերով և ինչպե՞ս է պետք իրականացնել աշխատանքը,
- խնդիրները ձևակերպելիս նպատակահարմար է օգտագործել հետևյալ (կամ՝ նմանատիպ) բայերը՝ - սահմանել, ուսումնասիրել, ծրագրել, նախապատրաստել, ստեղծել, մշակել, կիրառել, անցկացնել, փորձարկել, կազմակերպել, ընդգրկել, բացահայտել, հաստատել, վերլուծել, գնահատել, առաջարկել,
- աշխատանքի բովանդակություն,
- ձևակերպած հետազոտական աշխատանքի բովանդակությունը պետք է ընդգրկի աշխատանքի բոլոր կառուցվածքային մասերի անվանումները և աշխատանքի մեջ դրանց համապատասխանող էջերը: Օրինակ՝ Ներածություն (էջի մատնանշումով)……,
- Ներածության մեջ կարող է ներկայացվել հետևայլը՝ ներկայացվել թեմայի մասին ընդհանրական տեղեկություններ , թեմայի ընտրության կամ արդիականության հիմնավորումը, հետազոտության իրականացման հստակ նպատակները, խնդիրները, մեթոդաբանությունը կամ դրանցից մի քանիսը և այլն,
- հիմնական մաս,
- այս մասն իր մեջ ընդգրկում է գլուխները կամ ենթագլուխները, հիմնական աշխատանքը,

- յուրաքանչյուր գլուխ և դրա ենթագլուխները անպայման պետք է ունենան վերնագրեր, որոնք պետք է տրամաբանորեն կապակցված լինեն և միասին ամբողջացնեն գլխի նպատակները,
- եզրակացություններ,
- եզրակացությունները պետք է վերլուծական դիտարկումներ պարունակեն աշխատանքի արդյունքների մասին, պարունակեն հետազոտության արդյունքների վերլուծություն , ստացված արդյունքների գնահատում և հետևությունների ձևակերպում,
- եզրակացությունները պետք է ձևակերպել ելնելով նպատակներից և խնդիրներից: Եզրակացությունը պետք է տեղեկություն տա նպատակի կամ խնդրի (դրանցից յուրաքանչյուրի) իրականացման արդյունքի մասին և պարունակի վերլուծական խոսք այդ արդյունքի հիմնավորման մասին (ինչո՞ւ այդպես ստացվեց, համապատասխանո՞ւմ էր արդյոք արդյունքը ակնկալիքին կամ ի՞նչը ապահովեց արդյունքի համապատասխանությունը ակնկալիքին, ո՞րն էր անհամապատասխանության պատճառը և այլն),
- եզրակացություններում կարող են լինել նաև առաջարկություններ, որոնք պետք է մատնանշեն նմանատիպ աշխատանքների բարելավման կամ սխալները վերացնելու այլընտրանքային ուղիներ,
- որևէ նպատակի կամ խնդրի չիրականացման դեպքում եզրակացության մեջ պետք է նշվի նման արդյունքի պատճառների մասին (օրինակ՝ մեթոդի անհամապատասխանության, ժամանակի անիրատեսության, հիմնական նպատակի կամ խնդրի հետ ուղղակի կապ չունենալու, անկախ հետազոտության նպատակ կամ խնդիր լինելու և այլ պատճառներ) և հնարավորության դեպքում առաջարկվի այլընտրանք,
- օգտագործված գրականության ցանկ,
- աշխատանքի կատարման ընթացիկ փուլերում, որպես օգտագործած սկզբնաղբյուրները հավաքագրելու ձև, առաջարկում ենք յուրաքանչյուր հղման կողքին փակագծում նշել տվյալ սկզբնաղբյուրի մասին: Իսկ աշխատանքի ավարտուն ձևակերպման փուլում դրանք տեղափոխել «գրականության ցանկ» բաժին,
- հետազոտական աշխատանքի ներկայացում,
- ներկայացման պատրաստ է ամբողջական ձևակերպված աշխատանքը ,
- աշխատանքը կարող է ներկայացվել անհատական աշխատանքի, ռեֆերատի, պրեզենտացիայի, պաստառների, զեկուցումների, գործնական աշխատանքների, նախագծերի և այլ ձևով ,
- հետազոտական աշխատանքի գնահատում,
- դասախոսները նախապես ներկայացնում են գնահատման չափանիշները և սանդղակային պահանջները՝ կախված աշխատանքից,
- գնահատելիս հաշվի են առնվում աշխատանքի կատարման տարբեր բաղադրիչներ. օրինակ՝ աշխատանքի ձևակերպման տեխնիկական պահանջների ու լեզվական գրագիտության ապահովումով աշխատանքի և/կամ սահիկահանդեսի ներկայացումը,

ազատ, անկաշկանդ զենկուցումը, նյութին տիրապետելու աստիճանը, ինքնուրույնության և վերլուծական ընդունակության աստիճանը, լսարանի հետ հաղորդակցվելու, համագործակցելու, աշխատանքին վերաբերող հարցերին տրվող պատասխանների որակը և այլն:

Հետազոտության անհրաժեշտ բաղադրիչները (հավելված 1)

1) **Անվանաթերթ**
2) **Բովանդակություն (ցանկ)**
3) **Ներածություն**
4) **Հիմնական մաս (գլուխներ)**
5) **Եզրակացություն(ներ)**
6) **Օգտագործված գրականության ցանկ**

Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին հետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունը ներկայացվում է համապատասխան ամբիոն՝ հետևյալ ձևաչափով.

Աշխատանքն իրականացրած կուրսը, աշխատանքում ներգրավված ուսանողների քանակը, մոդուլը կամ առարկան	Աշխատանքի անվանումը	Աշխատանքի նպատակը և ուսանողների առաջադրած խնդիրները	Աշխատանքի իրականացման ընթացքը	Աշխատանքի արդյունքները

Հավելված 1.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ

ԳՈՐԾՆԱԿԱՆ/ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ/ԻՆՈՆՈՒՐՈՒՅՆ/ ԱՇԽԱՏԱՆՔ / ԿԱՄ ՌԵՖԵՐԱՏ

Մասնագիտություն՝

Կուրս՝

Մոդուլի /առարկայի անվանումը՝

Դասախոս՝

Թեմա՝

Հրազդան 202

Բովանդակությունը

Ներածություն----------էջ

Հիմնական մաս ----------էջ

Եզրակացություն ----------էջ

Օգտագործված գրականության ցանկ ----------էջ

ԿՈՏԱՅՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

0916.01.5 –«ԴԵՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ» մասնագիտություն

ԱՄԲԻՈՆ՝ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ 2»

1. Սպառողներին տեղեկատվա-խորհրդատվական ծառայությունների մատուցում
2. Դեղերի, բժշկական նշանակության առարկաների և հարդեղագործական ապրանքների ընդունում, պահպանում և իրացում
3. Մեծածախ դեղագործական կազմակերպությունների գործունեության կազմակերպում և կառավարում
4. Դեղագործական կազմակերպություններում (դեղատներ, դեղագործական գործարաններ) դեղերի պատրաստում
5. Սանիտարական նորմերի, անվտանգության կանոնների և առաջին բուժօգնության կիրառում

0911.01.5 –«ԱՏԱՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾ» մասնագիտություն

ԱՄԲԻՈՆ՝ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ 2»

1. Անշարժ ատամնապրոթեզների պատրաստում և թերությունների շտկում
2. Շարժական ատամնապրոթեզների պատրաստում և վերանորոգում
3. Կլամերների կամ ատաչմենթային ֆիքսացիայի համակարգով բյուգելային պրոթեզների պատրաստում, թերությունների շտկում, վերանորոգում
4. Օրթոդոնտիկ ապարատների պատրաստում
5. Դիմածնոտային պրոթեզների պատրաստում
6. Ձուլման գործ և զոդման տեխնիկա
7. Նյութագիտության, սարքավորումների և գործիքների օգտագործման կանոնների կիրառություն
8. Աշխատանքի անվտանգության, արտադրական սանիտարիայի, ինֆեկցիոն և հակահրդեհային անվտանգության սահմանված չափանիշներ

0913.02.5- «ՔՈՒՅՐԱԿԱՆ ԳՈՐԾ» մասնագիտություն

ԱՄԲԻՈՆ՝ « ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՏՈՒԿ 1»

1. Հիվանդների խնամքի ժամանակ քույրական գործընթացի փուլերի իրականացում և փաստաթղթերով հիմնավորում

2. Բժշկական փաստաթղթերի վարում
3. Առողջության պահպանման և ամրապնդման համար առանձին անհատների, ընտանիքների և բնակչության խմբերի կրթման ու ուսուցմանն ուղղված կանխարգելման համալիր ծրագրերի պլանավորում և գնահատում
4. Ստացիոնար և տնային պայմաններում քույրական խնամքի կազմակերպում և իրականացում
5. Ծանր և սահմանային վիճակում գտնվող հիվանդների և տուժածների վիճակի գնահատում և առաջնային ախտանիշների ու համախտանիշների տարբերակում, անհետաձգելի իրավիճակներում նախաբժշկական օգնության ցուցաբերում
6. Հիվանդին լաբորատոր, ֆունկցիոնալ և գործիքային հետազոտություններին նախապատրաստում
7. Ֆիզիոթերապևտիկ գործողությունների /պրոցեդուրա/ հիմնական տեսակների կատարում, հոգեթերապիայի տարրերի օգտագործում, բժշկիի նշանակած սննդակարգի /դիետա/ պահպանման նկատմամբ հսկողություն, բուժական գործողությունների արդյունավետության գնահատում
8. Հիվանդների համալիր խնամք
9. Հիվանդությունների կանխարգելում, բժշկի ախտորոշիչ և բուժական նշանակումների կատարում
10. Բնակչության, հիվանդների, տուժածների, աղետների բժշկության ծառայության բուժանձնակազմի պաշտպանությանը վերաբերող միջոցառումների անցկացում
11. Կոնկրետ հիվանդի պարագայում դեղամիջոցների արդյունավետության գնահատում, դեղորայքային թունավորման ժամանակ նախաբժշկական օգնության ցուցաբերում

0811.03.5- «ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» մասնագիտություն
ԱՄԲԻՈՆ՝ «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ»

1. Մշակաբույսի պահանջներին համապատասխան գնահատել հողի որակը
2. Կազմել կուլտուրցանքաշրջանության սխեմաներ
3. Կազմակերպել հողի նախացանքային մշակությունը
4. Կազմել ագրոտեխնիկական աշխատանքների ժամանակացույցեր
5. Մասնակցել ջերմատան տարածքի օգտագործման նախագծմանը
6. Հսկել ջերմատնային տնտեսության միկրոկլիմայի ռեժիմների պահպանությունը
7. Հողի և բույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումներ
8. Կիրառել օրգանական գյուղատնտեսության ձեռքբերումները
9. Գնահատել ստացված արտադրանքի որակը
10. Կազմակերպել մշակաբույսերի ցանքի և սածիլման աշխատանքները
11. Վարել անհրաժեշտ փաստաթղթային տնտեսությունը
12. Կազմակերպել հողախառնուրդների պատրաստումը
13. Իրականացնել հողաբարելավման աշխատանքներ

0613.01.5-«ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ» մասնագիտություն

ԱՄԲԻՈՆ՝ «ՀԱՇՎՈՂԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ»

1. Տվյալների շտեմարանի կառուցվածքի համակարգչային ճարտարապետության, ավտոմատացված համակարգերի և ծրագրային ապահովման կատարելագործում
2. Համակարգիչները և դրանց համակարգերը կիրառելիս հաշվողական միջոցների աշխատանքը վերահսկող տեխնիկական և ծրագրային ապահովման փոխադարձ կապը պահպանող ծրագրերի տվյալների մշակումը, թարմացումը
3. Օպերատիվ համակարգերի, կիրառական ծրագրերի, հավելվածների, սարքերի դրայվերների տեղադրում, կարգավորում
4. Տեղեկատվության որոնում և համաշխարհային տեղեկատվական ռեսուրսների օգտագործում
5. Մշակված ծրագրերի փորձարկում, շտկում, ճշգրտում
6. Այլ կազմակերպությունների մշակած պատրաստի ծրագերի ներդրումը այլ խնդիրների ծրագրային մշակման մեջ
7. Համակարգչային ծրագրերի և փաստաթղթերի սպասարկում,մուտքային ալգորիթմական լեզուների մշակում

0411. 01.5- «ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» մասնագիտություն

ԱՄԲԻՈՆ՝ «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ»

1. Կազմակերպության տնտեսական գործունեության ամբողջական հաշվառում և վերլուծություն՝ ընդհանուր սկզբունքներին և օրենսդրությանը համապատասխան
2. Հաշվապահական հաշվառման համակարգչային ծրագրերի կիրառում
3. Էլեկտրոնային հաշվետվությունների լրացում և ֆինանսական հաշվետվությունների կազմման մասնակցություն
4. Ֆինանսական ներքին վերահսկողության իրականացում
5. Ինքնուրույն դիտարկել և վերլուծել մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը, տեղեկությունները համադրել և ամբողջության մեջ դիտարկել դրանք
6. Մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվության փնտրում, կիրառում և դրանք նպատակային օգտագործում կամ փոխանցում
7. Մասնագիտական ընթացիկ խնդիրների լուծման ժամանակ ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառում
8. Տնտեսագիտական հիմնադրույթների, մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների, մակրոտնտեսության և միկրոտնտեսության

օրենքների, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունների իմացություն

0413.06.5- «ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ՝ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԽՈՐԱՑՎԱԾ ԻՄԱՑՈՒԹՅԱՄԲ» մասնագիտություն

ԱՄԲԻՈՆ՝ «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ»

1. Զբոսաշրջային ծառայությունները և ծառայություններ մատուցող կազմակերպությունները
2. Զբոսաշրջային ծառայություններ մատուցող օբյեկտներին ներկայացվող պահանջները
3. Զբոսաշրջային արտադրանքը(փաթեթ) և դրա ստեղծման աշխատանքները
4. Հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում հյուրընկալության ծառայությունների մատուցման աշխատանքների պլանավորում, համակարգում և ղեկավարում
5. Անիմացիոն ծառայությունները զբոսաշրջային ոլորտում
6. Ընդունարանի ծառայության աշխատանքների կազմակերպում
7. Հյուրընկալության ժամանակ հնարավոր կոնֆլիկտային իրավիճակները, դրանց առաջացման պատճառները և հարթման ուղիները
8. Սենյակների սպասարկման ծառայության աշխատանքների կազմակերպում
9. ժամանցային, ռեկրեացիոն (առողջարարական և սպա) բնույթի ծառայությունների կազմակերպում
10. Միջոցառումների կազմակերպում, սպասարկում և խթանում
11. Ազգային տոներ, մշակութային և կրոնական առանձնահատկություններ
12. Նորամուծությունները հյուրընկալության ոլորտում
13. Մարքեթինգային հմտություններ, կառավարման (մենեջմենթի) ընդհանուր կարողություններ

1041. 01.5- «ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ ԸՍՏ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ» մասնագիտություն

ԱՄԲԻՈՆ՝ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ»

1. Դասակարգի բեռները,փաթեթավորումը , տարբերի բեռները ըստ մակնիշների, բեռների դասակարգման, բեռների փաթեթավորմանը և ամրացմանը ներկայացվող պահանջներ, բեռնման-բեռնաթափման գործընթացներ, օգտագործվող տեխնիկական միջոցներ
2. Բեռնատար տրանսպորտային տեսակի որոշում՝ տվյալ բեռներ փոխադրելու համար
3. Ավտոմոբիլային տրանսպորտային ցանց
4. Ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտի շարժակազմի դասակարգում

5.Ավտոմոբիլային տրանսպորտում օգտագործվող տեղեկատվական և ավտոմատ համակարգեր
6. Ուղեթերթիկների կազմում , երթևեկության չվացուցակի գրաֆիկների սահմանում
7. Ուղևորահոսքերի, բեռնահոսքերի ուսումնասիրում
8. Բեռնման – բեռնաթափման մեխանիզմների դասակարգում
9. Միջպետական փոխադրումներում հաստատված տերմինները
10. միջպետական փոխադրումներում անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպում
11.Միջպետական փոխադրումների կազմակերպման գործընթաց

0731.10.4- «ԳԱԶԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՏՈՐԳԵՏՆՅԱ ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ /ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ/» մասնագիտություն

ԱՄԲԻՈՆ՝ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ»

1. Կենցաղայի և արդյունաբերական ձեռնարկությունների գազամատակարարման համակարգի սարքավորումների ու դրանց համակարգերի չափանշում

2. Հավակցման մոնտաժում և տեղակայման աշխատանքների կատարում

3. Կենցաղային ու արդյունաբերական ձեռնարկությունների գազամատակարարման սարքավորումների ստուգում

4. Կենցաղային ու արդյունաբերական ձեռնարկությունների գազամատակարարման ընթացիկ ու հիմնանորոգման աշխատանքներ

5. Տեխնիկական անսարքությունները և դրանց ծնող պատճառների բացահայտում

6.Բացահայտի գազի հնարավոր արտահոսքերի բացահայտում , հնարավոր պատճառների վերացում

7. Կլանող գազազտիչների շահագործում

8. Փականագործական գործիքների ընտրություն և կիրառություն

9. Գայլիկոնման, զոդման, եռակցման ,սոսնձման և կապակցման համար անհրաժեշտ գործիքների ու սարքավորումների ընտրություն

10. Գազամատակարարման համակարգերն ու դրանց սարքավորումների ստուգում և փորձարկում:

0212.01.5 «ԴԻԶԱՅՆ » մասնագիտություն

ԱՄԲԻՈՆ՝ «ԴԻԶԱՅՆ»

1. Դիզայն-նախագծային պրոցեսի իրականացում,
2. Նախագծային պահանջներից ելնող փաստաթղթային փաթեթի ստեղծում՝ գունագրաֆիկական տախտակների մշակում, նախագծի տեսական մասի բացատրագրի ձևակերպում, նախագծի աշխատանքային մանրակերտի կամ մոդելի ստեղծում,
3. Գրաֆիկական ֆիրմային ոճի տարրերի նախագծում և իրականացում,
4. Գովազդային պաստառների և գրաֆիկական այլ տարրերի նախագծում,
5. Դիզայնի տարբեր ոլորտների նախագծային հիմնախնդիրների բացահայտում ,
6. Մանրակերտի պատրաստման տեխնոլոգիական հնարքների տիրապետում,
7. Մասնագիտական լաբորատորիաներում պրոֆեսիոնալ գիտելիքների կիրառման տիրապետում ,
8. Հրատարակչական կենտրոններում դիզայն առաջարկների հեղինակային հսկողության իրականացում,
9. Դիզայն լաբորատորիաներում և ստեղծագործական արվեստանոցներում առկա խնդիրների պարզաբանում,
10. Դիզայն լրատվության ճիշտ և արդյունավետ կիրառում,
11. Դիզայն լուսանկարչական հմտությունների պրոֆեսիոնալ կատարում,
12. Նախագծվող օբյեկտների գաբարիտային և աշխատանքային գծագրերի կատարում,
13. Համակարգչային տեխնոլոգիաների կիրառում դիզայն նախագծերում,
14. Նախագծային պրոցեսում դիզայնի հարցադրումներով սպառողական և ֆունկցիոնալ վերլուծությունների իրականացում,
15. Նախագծային մտքի փնտրողական և ավարտուն էսքիզների կատարում:

Տնօրենի պարտականությունները կատարող՝ Վ. Թովմասյան